



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Անդրկովկասյան գյուղատնտեսության մեջնայաց-  
ման և եղեկտիֆիկացման գիտական հետազոտա-  
կան ինստիտուտ

ԱՐՄԵՆԱԿ ԱԼ. ԹՈՒՄԱՆՅԱՆՑ

**ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ՇԱՐՔԱՅԱՆ  
ՅԵՎ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄ**

Արմենակ Ալ. Թումանյանց

**ТРАКТОРНАЯ СЕЯЛКА  
И АГРОМИНИМУМ**

631-33

P - 88

1934 — ԲԻՅԵՐՈ

19 APR 2013

04 AUG 2010

Անդրկովկասյան գյուղատնտեսության մեթոնայաց-  
ման և ելեկտրիֆիկացման գիտական հետազոտա-  
կան ինստիտուտ

Հ 2007  
32

ԱՐՄԵՆԻԱ ԱԼ. ԹՈՒՄԱՆՅԱՆՑ

ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԶԱՐՔԱՅԱՆ  
ՅԵՎ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄ

3854

Արմենակ Ալ. Թումանյանց

ТРАКТОРНАЯ СЕЯЛКА  
И АГРОМИНИМУМ



I. Շարքացան մեմենան բարձրացնում է  
բերքատվությունը յեզ սնևեսում սերմը

Բարձր բերք ստանալու համար, մեծ նը-  
շանակություն ունի սերմը ժամանակին և  
կանոնավոր ձևով ցանելը: Կանոնավոր ցանք-  
ով պահանջում է, վորպեսզի սերմերը դաշ-  
տում՝ հողի մեջ ցըվեն հավասար տարածու-  
թյամբ և հավասար խորությամբ:

Հավասարաչափ ցանելը մեծ հնարավո-  
րություն և տալիս սերմերը ժամանակին  
ծլելու, բուսականության զարգացմանը և  
աղատ աճմանը:

Այս բոլորի հետևանքով, միաժամանակ  
համառմ են հասկերը, վորը հսկայական նը-  
շանակություն ունի բերքի բարձրացման  
համար:

Գոյություն ունեն յերեք ձևի ցանք-  
սեր՝ շաղացան, շարքացան և բնավոր:

Ցանքսը շարքերով կատարվում ե շարքացանի միջոցով, վորի խոփիկները (սաշ-նիկներ) հավասար խորության և հավասար հեռավորության վրա դասավորված լինելու շնորհիվ ստացվում ե կանոնավոր ցանքս:

Շարքացանի ցանող ապաբատն ունի կանոնավորող հարմարություններ, վորոնց միջոցով կարելի յե դասավորել ըստ պահանջված խորության և ըստ շարքերի հեռավորության:

Շարքացանի առավելությունները կայանում են նրանում, վոր շարքերով ցանած բուսականությունը, ազատ և ուժեղ և զարգանում, իսկ ուժեղ զարգացման հետևմանը լինում ե բերքի բարձրացումը:

Շարքացաններով ցանելու ժամանակ բարձրանում ե նաև արտադրողականությունը, որինակ, ձեռքով ցանելու ժամանակ կարելի յե ցանել մը որում վոչ ավել 3 հեկտարից, իսկ մեքենայով ցանելու դեպում, առնվազն մեկ ժամում մեկ հեկտար, այսինքն 10 ժամում 10 հեկտար բացի դրանից

30—50% տնտեսվում ե սերմբ: Այս հանգամանքը հակայական նշանակություն ունի մեր միլիոնավոր հեկտարներով ցանվող խորհութեառների և կոլտնտեսությունների սերմբ տնտեսման բնագավառում:

Միատեսակ պայմաններում ցանած բուսականությունը բարձրացնում ե բերքը ամենաքիչը 10—12%, յեթե ցանված ե շարքերով, հավասար հեռավորության և խորության վրա՝ այսինքն շարքացանով: Համարյա բոլոր բուսականությունների համար գոյություն ունեն շարքացաններ, որինակ, խոտաբույսային, բանջարանոցային, յեզիդացորենի, բամբակի և այլն: Այստեղ մենք կանգ կառնենք տրակտորային ավտեավոր շարքացանի վրա, վորը ոգտագործվում ե հացահատիկային սերմեր ցանելու ժամանակ՝ ցորեն, գարի, վարսակ և այլն:

II. Տրակուրային ափսեավոր շարքացանի  
հակիրն տեխնիկական նկարագրությունը

Շարքացանը բաղկացած է հետեյալ գրւ-  
խավոր մասերից. սերմի արկղ, ցանող խո-  
փիկներ (սաշնիկներ) իր ափսեներով, կա-  
նոնավորիչ հարմարություններ, ցանող «հու-  
զերի» ապարատ, սերմախողովակներ, փո-  
խանցման առանձնավոր անիմսեր և այլն:

Արկղը շինվում է փայտից կամ մետա-  
ղյա թիթեղից. Արկղի մեծությունը կախ-  
ված է շարքացանի ընդգրկումից—լայնու-  
թյունից, վորքան շարքերը շատ են այնքան  
արկղը պետք է մեծ լինի. Մեր խորհրդային  
գործարաններում պատրաստված 24 ափ-  
սեավոր շարքացանի արկղում, պարունակ-  
վում է 180 կիլոգրամ սերմ:

Արկղի հատակը կոնաձև է, շնորհիվ դը-  
րան հեշտանում է սերմի ընթացքը դեպի  
արկղի հատակում գտնվող սերմանցքերը,  
վորտեղից սերմը անցնում է սերմախողո-  
վակների մեջ, իսկ այս վերջիններից ընկ-

նում է խոփիկների միջոցով առաջացած  
ակոսիկների մեջ:

Արկղի մեջ սերմը լցնելու ժամանակ  
պետք է նրա խուփը բոլորովին բաց լինի,  
վորպեսզի հեշտ լինի սերմի լցնելը և վոր  
ամենագլխավորն է սերմը չթափվի: Արկղը  
լցնելուց հետո պետք է խուփը ամուր փա-  
կեր վորպեսզի սերմը չթափվի անցքերից:

Մի քանի շարքացանների արկղների ներ-  
սում գրված են խառնիչներ, գրանց գերը  
կայանում է նրանում, վորպեսզի արկղի մեջ  
սերմը չսեղմի և նորմալ կերպով թափվի  
սերմախողովակների անցքերով, վորովհետեւ  
խառնող ապարատը, շնորհիվ իր առանց-  
քի պատրաստված հարմարությունների, շարունակ խառնում է սեր-  
մը և հեշտացնում սերմի թափվելը անց-  
քերից:

Արկղի ներքեմի մասում, ամրացվում  
են սերմացան խողովակներն իրենց վերի  
ծալրությունը:

### III. Յանող ապարաւած

Հայահատիկային շարքացանների ցանող ապարաւաը մեկ ընդհանուր սոնու (ծողի) միջոցով, վորի վրա դասավորված են «հուզերի» տիպի ապարաւատները, հատուկ առամնավոր անիմսերի շնորհիվ միացվում են տանող անիմսերի հետ և այս վերջինների պտտվելու ժամանակ պտտվում են նաև ցանող ապարաւաը և սերմը թափում սերմնարկի անցքերից սերմնախողովակների մեջ:

Յանող ապարաւաը հիմնականում բաղկացած է՝ 1) սոնուց (առանցք), վորի վրա դասավորված են կոճերը և հագուցիկները. 2) կոճերից և 3) հագուցիկներից (մուֆտոչկա):

Յանող ապարաւատները դրված են սերմնարկի հատակում գտնվող անցքերում: Սըրանք նման են առամնավոր անիմսերի, վորոնք ընդհանուր սոնով միացված լինելով տանող անիմսերին, սրանց պտտվելու ժամանակ պտտվում են, և ցանող ապարաւա-

ները իրենց փոսիկների միջոցով, սերմը թափում սերմնախողովակների մեջ:

Յանքսի խտացնելու կամ նոսրացնելու ժամանակ կոճերը կարելի յե աջ կամ ձախ շարժել, նույնիսկ կարելի յե բոլորովին փակել հատուկ լծակի միջոցով. լծակի շարժվելով տեղաշարժվում են կոճերը, նրանց տեղը բռնում են հագուցիկները:

Հագուցիկների գերը կայանում են նրանում, վոր փակեն արկղի հատակում գտընվող անցքի այն մասը, վորը չի գրավված կոճերի միջոցով, վորպեսզի սերմը չթափվի: Յանքսի խտացումը կամ նոսրացումը կանոնավորելու համար, կոճերն ունեն լծակ, վորի միջոցով կարելի յե աջ կամ ձախ շարժել, այսինքն սերմի թափվելու անցքը մեծացնել կամ փոքրացնել:

Կոճերի դասավորման ժամանակ պետք է աշխատել, վոր նրանք լինեն միատեսակ դասավորված, այսինքն հետ կամ առաջ չըլինեն, այլապես նրանք զանազան քանակի սերմ կթափեն սերմնախողովակների մեջ,

այսինքն մի շարքում շատ կցանվի, իսկ մյուսում քիչ այդպիսով առաջ կդա անհավասար ցանքս, բացի դրանից ցանքսի քանակը կախված է նաև այն առանցքի պըտույտների քանակից, վորի վրա ամրացված են կոճերը: Առանցքի արագությունը կախված է փոխանցման առամեավոր անիվների գասավորումից, վորոնց մասին կիսուենք ներքեում:

#### IV. Ցանող ապարատի աշխատանքը

Ցանող ապարատը, իր պտույտները ստանում է շարքացանի տանող անիվներից (յերբեմն ել կարգանի առանցքի միջոցով) շորհիվ մի քանի առամեավոր անիվների միացումից: Առամեավոր անիվների զանազան ձևի դասավորումով կարելի յե կոճերի առանցքի պտույտները դանդաղեցնել կամ արագացնել. յեթե ուղում ենք ավելի խիտ ցանել, այդ գեպքում առանցքի պտույտները կոճերի հետ միասին պետք է արագացնել և ընդհակառակը՝ յերբ ուղում ենք նոս-

րացնել, պետք է դանդաղեցնել: Առամեավոր անիվները դրված են սերմարկղի ձախ կողմի վրա:

Սրանց դասավորումը կատարվում է համաձայն շարքացանի հետ ուղարկված աղյուսակի: Առամեավոր անիվների զանազան ձևի դասավորման հետևանքով, նույն շարքացանով կարելի յե կատարել «ներքեկ» և «վերև» ցանքս:

Աչքի առաջ գլուխնալով թե ինչ մեծության հատիկ ունեցող սերմ պետք է ցանել ոգտվում են ներքի կամ վերի մատակարարումով: Յեթե մեծ հատիկներ ունեցող սերմ պետք է ցանել. որինակ յեգիալտացորեն, գորոխ և այլն. ոգտվում են վերի մատակարարումով, իսկ յեթե մանր հատիկներ ունեցող սերմ՝ որինակ ցորեն, գարի, վարսակ, ոգտվում են ներքեկի մատակարարումով:

Առամեավոր անիվները միմյանց հետ միացնելու ժամանակ, առամերի մեջ պետք է թողնել մի վորոշ տարածություն, վորով-

հետեւ յեթե մի վորոշ տարածություն չկա, այսինքն ատամները սեղմված են միմիանց, կամ ընդհակառակը միմիանցից շատ են հեռու, յերկու գեպքում ել ատամները շատ են մաշվում, վորովհետեւ տեղի յեւ ունենում առաջին գեպքում ուժեղ շփում, իսկ յերկրորդ գեպքում ավելորդ սայթաքում և հարվածներ:

#### V. Սերմնախողովակները յեվ խոփերը

Սերմնախողովակները զլիավորապես լինում են յերկու տեսակի՝ 1) սետինե, խողովակաձե, սըանք այնքան ել հարմար չեն, վորովհետեւ աշխատանքի ժամանակ շատ են թեքվում, վորի հետևանքով սերմը հավաքվում ե և այլն չի ցանվում, յերկրորդ տեսակը շինվում ե մետաղյա (պողպատի) ժապավենից վոլորած խողովակաձե, սերմնախողովակները վերևի ծայրով միացված են «հուգերի» ապաբարատի ներքելից, սերմը արկղից դուրս թափվելու անցքի տակ, իսկ մյուս ծայրը դրված է խոփիկների մեջ։ Խո-

փիկները լինում են զանազան տեսակի, սըրանցից ափսեավոր խոփիկներն ավելի գործածական են քանի մյուս տեսակները։ Ափսեավոր խոփիկներն իրենց հերթին բաժանվում են յերկափսեանի։ Սերմի ակոսները ստացվում են ափսեների պտույտների ժամանակ, սըրանք խորանում են հողի մեջ և հողը շուռտալիս յերկու կողմերի վրա։

Այսպիսով առաջ ե գալիս ակոսիկներ, ուր ընկնում ե սերմնախողովակների միջոցով սերմը։

Ափսեների վրա գտնվում են քերիչներ, վորոնք միաժամանակ մաքրում են ափսեները թե ներսից և թե դրսից, նրանց բըթացման ժամանակ։

Յերբեմն խոփիկների հետեւ կախվում են շղթաներ, վորոնք վորոշ չափով ծածկում են ակոսիկների մեջ ընկած սերմերը և միաժամանակ հարթեցնում ակոսիկները։

Ցանքսի խորությունը կանոնավորվում է ափսեները հողում խորացնելով։

Ավսեները հողում խորանում են շնորհիվ իրենց ծանրության և հատուկ գսալանակների ճնշումների տակ: Խոփիկներն ամրացած են հատուկ մետաղյա ձողերի (սոնի) վրա, բռունցքներով բարձրացնող յեղանների միջոցով: Բարձրացնող յեղանների ազատ ծայրի մեջ դրված ե յերկաթյա ձող—զըսպանակի հետ միասին, այս ձողի վերի ծայրում կան մի քանի անցքեր զանազան հեռավորության վրա, այս անցքերի միջով կարողանում են գսալանակները կանոնավորել, այսինքն կամ ավելացնում են նրանց ճնշումը ափսեների վրա և կամ ընդհակառակը, յեթե գսալանակներն ավելի ուժեղ են ճընշում ափսեներին, այդպիսի դեպքում ավելի խոր ակոսներ ե ստացվում, այսինքն խոր ցանքս ե կատարվում:

## VI. Ա. Վ Տ Ո Մ Ա Ը Ր

Մի քանի տեսակի շարքացաններ ունեն ավտոմատ մեխանիզմ, վորի միջոցով բարձրացվում կամ իջեցվում են խոփիկները:

Ավտոմատի ծնկաձև առանցքի կիսապտույտով մի զբությունից խոփիկները կարելի յե գնել մի ուրիշ զբության: Որինակ, յեթե աշխատանքի մեջ եյին խոփիկները, կարելի յե բարձրացնել փոխադրելու համար: Ավտոմատը աշխատանքի յե գցվում հատուկ լծակի միջոցով, վորը ամրացված է շարքացանի շրջանակի վրա: Ավտոմատի միացումը չի կարելի կատարել, յեթե սաշնիկները բարձրացրած են ձեռքի լծակների միջոցով:

## VII. ՑԱՆՔՆԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՄԱՅՐ

Սերմի քանակը ստուգվում ե հետեւյալ ձևով՝ շարքացանի արկղը լցնում են սերմով, շարքացանի անիվը, վորի վրա գտընվում են փոխացման ատամնավոր անիվերը, բարձրացնում են այնքան, վորպեսզի պլատրտիկելու ժամանակ գետնին չշփափի: Շարքացանի տակ փուռմ են բրեզենտ կամ ուրիշ բան, վորպեսզի թափված սերմը առանց կորուստի կարողանան հավաքել և կշռել:

Այնուհետև իջեցնում են խոփիկները—  
ափսեները և սկսում են պտտել անիմն այն  
արագությամբ, ինչ արագությունն նա ու-  
նենում է նորմալ աշխատանքի ժամանակ.  
Դրա համար նախորոք պետք է վորոշել թե  
մի հեկտարի վրա տվյալ շարքացանի անի-  
վը քանի անգամ կպտտվի փաստը են ցա-  
նելու ժամանակ։ Չնայած այն հանգաման-  
քին, վոր բոլոր շարքացաններն ունեն քա-  
նակ ցույց տվող մեխանիզմ—ցուցանիշ, այ-  
նուամենայնիվ ամեն անգամ պետք է ստու-  
գել սերմի քանակը, դասավորելով ցուցանի-  
շի լծակը այս կամ այն կողմը։ Հացահա-  
տիկները զանազան շրջաններում տարբեր  
ծավալ և քաշ են ունենում, այդ իսկ պատ-  
ճառով ել հարկավոր է ստուգել շարքացա-  
նը տարբեր սերմերի գեղքում։ Յերբ վորոշ-  
ված ե թե շարքացանի անիվը մի հեկտա-  
րում քանի անգամ պետք է պտտվի, այն  
ժամանակ պետք է վերցնել  $\frac{1}{25}$ -րդ մասը  
հեկտարի և անիվը պտտել այնքան, վոր-  
քան  $\frac{1}{25}$ -րդ հեկտարի վրա. յենթագրենք

1/ $\frac{1}{25}$ -րդ հեկտար տարածությունը ցանելու  
ժամանակ տվյալ շարքացանի անիվը կպը-  
տը ավել 28 անգամ, ուրեմն պետք է պտտել  
28 անգամ և թափած սերմը կշռել յեթե  
ավել կամ պակաս է ընդունված քանակից,  
այդ գեղքում ցուցանիշի լծակը պետք է  
տանել այս կամ այն կողմը և նորից կը դրե-  
մել անիվը պտույտները, մինչև վոր թափ-  
ած սերմի քանակը համապատասխանի ըն-  
դունված կամ վորոշված քանակին։

Անիվի պտույտների քանակը վորոշելու  
բոլոր հաշվիները պետք է կատարել չափե-  
րը մետրերի վերածելով, որինակ՝ յենթա-  
գրենք պետք է վորոշել ցանքսի քանակը 24  
ափսեավոր արակտորային շարքացանի ժա-  
մանակ, պետք է կատարել հետեւյալ ձևով։

Տանող անիվի շրջագծի յերկարությու-  
նը հավասար է 3,94 մետրի։ Շարքացանի  
լայնությունը կազմում է շարքերի քանակը  
բազմապատկած շարքից—շարք տարածու-  
թյան վրա, որինակ շարքերի քանակն է 24,  
իսկ շարքի պարագաներունը 15 սանտի-

մետր, ուրեմն լայնությունը հավասար է  $24 \times 15 = 360$  սմ։ Վորպեսզի վորոշել թե անիվի մի պտույտի ժամանակ վորքան քառակուսի մետր կցանի շարքացանը, դրա համար պետք է անիվի Մջագիծը բազմապատկել շարքացանի լայնությամբ, այսինքն  $3,94 \times 3,60 = 14,18$  քառ. մետրի։ Այսուհետև հարկավոր է իմանալ թե  $1/25$ -րդ հեկտարում շարքացանի անիվը քանի անգամ պետք ե պտտվի, դրա համար մեկ հեկտարը պետք ե բաժանել 25-ի և ապա մեկ պտույտով ցանած տարածության վրա. (մեկ հեկտարն ունի 10.000 քառ. մետր) այսինքն  $10.000 : 25 = 400$  քառ մետրի։

$400 : 14,18 = 28,2$ , ուրեմն տվյալ շարքացանի անիվը  $1/25$ -րդ հեկտարի տարածությունը ցանելու ժամանակ կպտտվի 28,2 անգամ։

Այս բոլորից հետո, պետք ե վորոշել թե  $1/25$ -րդ հեկտարում վորքան սերմ պետք ե ցանել, յենթադրենք դյուզատնտեսը վորոշել և մեկ հեկտարում ցանել 120 կիլո-

դրամ, դրա համար  $120 \cdot ը պետք ե բաժանել 25$ -ի, կստացվի  $1/25$  մասը  $= 120 : 25 = 4,8$  կիլոգր., հետևապես շարքացանի անիվը 28 պտույտի ժամանակ՝ բոլոր խոփիկներից սերմ պետք ե թափվի հատակի վրա 4,8 կիլոդրամ։

Աչքի առաջ պետք ե ունենալ նաև այն հանգամանքը, վոր անիվի արագ պտտվելու դեպքում սերմը քիչ ե թափվում քան դանդաղ պտտվելու ժամանակ, հետևապես պետք ե պտտել այն արագությամբ, ինչ վոր փաստորեն աշխատանքի ժամանակ։ Զեռքով պըտըտելիս անիվը պետք ե պտտվի 3,7 վայրկյանում մեկ անգամ։

VIII. Շարքացանի դասավորումը աշխատների ճամանակ

Յերբ վերջացած ե սերմի քանակի ըստուգումը, խոփիկները դրված են հարկավոր խորության վրա, ստուգված են բոլոր մասերը—գնդերի թները, պտուտակները և այլն, շարքացանը կցվում ե տրակտորի հե-

տեկից Յելնելով տրակտորի ձգողական ուժի  
ունակությունից միացվում են մեկ կամ մի  
քանի շարքացաններ:

Շարքացանի աշխատանքի ժամանակ  
հարկավոր ե հատուկ բանվոր, վորը հսկում  
ե կատարած աշխատանքը և ուղղում այն  
բոլոր թերությունները, վորոնք կարող են  
նկատվել աշխատանքի ժամանակ. գիտենա-  
լով շարքացանի արկղի ծավալը և նրա մեջ  
պարունակվող սերմի քանակը, նախորդ  
պետք ե վորոշել թե արկղում պարունակ-  
ված սերմը ինչ աարածություն կարող ե  
ցանել և ըստ այնմ սերմի պաշարի պար-  
կեցը դնել այն կետերում, վորտեղից կա-  
րեք կլինի արկղը նորից լցնել:

Աշխատանքի արտադրողականությունը  
բարձրացնելու համար մեծ նշանակությունը  
ունի արկղը լցնելու գործի կազմակերպու-  
մը, վորի վրա հարկավոր ե լուրջ ուշադրու-  
թյուն դարձնել: Դաշտի ծայրերում դառնա-  
լու ժամանակ խոփիկները պետք ե բար-  
ձրացնել հողից ձեռքի լծակների միջոցով:

Այդպիսի գեպքերում ավտոմատի միջո-  
ցով չպետք ե ոգտվել, վորովճետն կարելի  
յե ավտոմատը վչացնել—կոտրել:

## IX. Մեքենայի խնամքը

Մեքենան պետք ե մաքուր պահել, իր  
ժամանակին կանոնավոր յուղել, ստուգել  
ժամանակ առ ժամանակ բոլոր ամրություն-  
ները և գնդերեթները, պտուտակները և այլն:  
Յուղումն.

Խիտ յուղով—(տավող) յուղվում են՝  
1. Տանող անիմսերի առանցքակալները.  
2. Ավտոմատը, յուղել յուրաքանչյուր 4  
ժամվա աշխատանքից հետո.  
3. Ծնկաձև առանցքի ծայրերի առանց-  
քակալները յուղել ըստ պահանջի.

Յուղել թերեվ յուղով. 1) Յանող ա-  
ռանցքի առանցքակալները, 2) առանձնավոր  
անիմսերի անցքերը, 3) անջատողի սռնին  
4) ափսեավոր խոփիկները, յուղել յուրա-  
քանչյուր 8 ժամվա աշխատանքից հետո.  
5) ավտոմատի շրջանակի գլուխը 4 ժամից

հետո, 6) խոփիկները բարձրացնող սռնու  
առանցքակալները 24 ժամից հետո:

Նախքան աշխատանքի սկսելը պետք է  
սուսակել մեքենան, յուղել բոլոր շիփոր մա-  
սերը, մաքրել մեքենայի ցանող մեխանիզմ-  
ները:

Շարքացանը պետք է պահել ծածկված  
շինության տակ:

Բացի շարքացանով ցանելուց՝ բերքա-  
տվության բարձրացման գործում մեծ դեր  
են խաղում նաև մի շարք ազգություններ, որոնց մասին ներքեում  
հակիրճ կերպով տրվում են տեղեկություններ:

## X. Ա. գ ր ո մ ի ն ի մ ո ւ մ

Բերքատվության բարձրացման գործում  
մեծ նշանակություն ունի ազգությունիմումը  
կյանքի մեջ կիրառելը: Ազգությունիմումը կոլ-  
լեկտիվ և խորհանուեառությունների համար  
պետք է հանդիսանա վորպես պարտադիր  
միջոցառում:

Սնհրաժեշտ են մի շարք ազգություններ, ինչպիսիք են շարքա-  
ցանը, վաղ ցել կատարելը, սերմի զառւմը,  
ախտահանելը, արտերը քարերից մաքրելը,  
միջնակների վերացնելը, հողը ժամանակին  
և կանոնավոր մշակելը ցանքսի համար և  
այլն:

## XI. Հողի մշակությունը

Միանգամայն ավելի յե, վոր ամեն  
տեսակ մշակույթի հողը անպայման պետք  
է հերկվի գութանով, վորովհետև գութանը  
ունի մեծ առավելություններ: Առավելու-  
թյունը կայանում է մասնավորապես նրա-  
նում, վոր գութանով կարելի յե հերկել ցան-  
կացած խորությամբ:

2. Բացի դրանից հողի վերին շերտը մո-  
լախոտերի և զանազան բուսական մնացորդ-  
ների հետ միասին ընկնելով տակը, փառում  
և նեխվում են, այդպիսով դարձյալ հարըս-  
տացնում են հողը սննդարար նյութերով:  
Մյուս կողմից ստորին շերտն ընկնելով հո-

զի յերեսը յենթարկվում ե հողմնահարման,  
վորի հետևանքով հողի մեջ սննդատար նյու-  
թերն ավելանում են:

3. Հողի մեջ պահպանվում ե յեղած խո-  
նավությունը և պակասում ջրի գոլորշիա-  
ցումը:

4. Հողը փխրանում ու փափկանում ե,  
վորը անհրաժեշտ բույսերի արմատների  
լավ զարգացման համար:

5. Հավաքվում և պահպանվում ե խոնա-  
վությունը:

6. Վոչնչացնում ե վնասարարներին:

7. Որդանական նյութերի քայլքաման հե-  
տևանքով մի կողմից ավելանում ե բույսե-  
րի մննդառության համար անհրաժեշտ նյու-  
թերի քանակը, մյուս կողմից հողը ստա-  
նում ե անհրաժեշտ ստրուկտուրա—կպչա-  
նություն:

8. Արագանում ե հողի մեջ գտնվող մի-  
կրորդանիզմների կենսունակությունը. իսկ  
դրանք մեծ չափով նպաստում են հողի որ-  
գանական նյութերի քայլքայմանը:

9. Հողի մշակության հետևանքով ողբ  
ագատ մուտք ե գործում հողի մեջ, վորը  
վճռական նշանակություն ունի բույսերի  
զարգացման համար:

10. Հողի կանոնավոր մշակմամբ պայ-  
քար և մղվում մոլախոտերի զարդացման  
դեմ, վորոնք հողն աղքատացնում են սնըն-  
դանյութերից ու խոնավությունից և այն:

Բուլսը, ինչպես մյուս կենդանի եյակնե-  
րը, կերակրվում ե. առանց սննդի բույ-  
սը ապրել չի կարող:

Բույսը սնումով ստանում ե ողից և հո-  
ղից. Ողում յեղած մննդի չափը բույսի հա-  
մար սահմանափակված չե. իսկ հողում յե-  
ղած մննդի մասին պետք ե հոգս տանել:

Բույսերը կերակրվում են ի միջի այլոց  
նաև մի շարք հանքային նյութերով, յեթե  
հողում պակասում ե հարկավոր հանքանյու-  
թերից վորեն մեկը, բերքը կիջնի. այլ կերպ  
ասած՝ բերքի քանակը վորոշում ե այն ու-  
նընդանյութը, վորը հողում գտնվում ե ա-  
մենաքիչ չափով. Այդ դեպքում բավական ե

հողի մեջ մուծել պակասող աննդանյութը և  
բերքը լրիվ չափով կը արձրանա:

## XII. Ցանխի նախապարատական աշ- խատանիները

Հողի լրացուցիչ մշակումը

Հողի յերեսը գութանով մշակելուց հե-  
տո ստացվում է բավականին կոշտ ու կոշ-  
տերով անհարթ մակերես:

Հետագա մշակման համար գործածվում  
են ցաքաններ (փոցխեր) և կուլտիվատոր-  
ներ: Այդ գործիքները կատարում են զա-  
նազան ձևի աշխատանքներ—ջարդում են  
կոշտերը և փխրուն դարձնում հողը, հար-  
թում են դաշտի յերեսը և խառնում են հո-  
ղը, վոչնչացնում են անպետք բուսականու-  
թյունը:

## XIII. Ցախանը (փոցխը)

Հողի թեթևակի փխրեցնելու համար գոր-  
ծազրում են ցաքան: Ցաքաններից ամենա-

հասարակը զիգ-զագն ե: Նա բաղկացած ե  
յերկաթե շրջանակից և տատմներից: Շրջա-  
նակն այնպիսի ձև ունի, վոր ատամները  
ցաքանի յերկարությամբ ստանում են զիգ-  
զագաձև գրույթ:

Ցաքանի ատամներն այնպես պիտի գըր-  
ված լինեն, վոր այդ ատամներով փորփող  
ակոսիկները գտնվեն իրարից հավասար հե-  
ռավորության վրա. յուրաքանչյուր ատամ  
պետք ե անցկացնի մի առանձին ակոս և  
ատամներից վոչ մեկը չպետք ե ընթանա  
մյուսի հետքով:

Բացի կոշտ ատամներ ունեցող ցաքան-  
ներից, գործ են ածում նաև զսպանակավոր  
ատամներ ունեցող ցաքաններ:

Այն ժամանակ, յերբ հասարակ ատամնե-  
րը «սանրում են» հողը և հեռացնում իրա-  
րից նրա մասնիկները, զսպանակավոր ցա-  
քանների ատամներն ավելի հարվածելով են  
գործում և փխրեցնում հողի կոշտերը:  
Ըսորհիվ իրենց ձևի և աշխատանքի յուրա-  
հատկության, զսպանակավոր ցաքանները

նպաստում են դաշտը կեղտից մաքրելուն։  
Յանկալի յե ոգտագործել այն ժամանակ,  
յերբ հողը կեղտոտ ե մոլախոտերի արմատ-  
ներով։

Մեզանում շատ տարածված են ափսեա-  
ձեւդիսկավոր ցաքանները, մանավանդ տրակ-  
տորի համար։

Տրակտորային ափսեավոր ցաքանները  
մեծ մասամբ լինում են յերկու հետքավոր։  
Դիսկերի յերկու մարտկոցների յետևից նույն  
հետքով գնում են յետևի յերկու մարտկոց-  
ները։ Բոլոր չորս մարտկոցները մի ընդհա-  
նուր շրջանակ ունեն։ Առաջի մարտկոցնե-  
րի դիսկերն իրենց ուռուցիկ կողմերով դար-  
ձած են դեպի ցաքանի մեջտեղը, իսկ յե-  
տևի մարտկոցների դիսկերը դրված են հա-  
կառակ ուղղությամբ։ Այս պատճառով կըրկ-  
նակի դիսկավոր ցաքանը կարող է հիանա-  
լի կերպով մշակել և խառնել հողը։ Մարտ-  
կոցների յերկու զույգն ել կարող են լծա-  
կի ոգնությամբ փոխել դիսկերի թեքման  
անկյունը։ Ցեթե վարած դաշտը շատ խորդ

ու բորդություններ և կոշտեր ունի, այդ-  
պիսի դեպքում վորքան դիսկերի անկյունը  
փոքրանա, այնքան նրանք լավ են փիրաց-  
նում կոշտերը։

Ցեթե հողը վափուկ է, դիսկերի անկյունն-  
ները (նրանց հերքերի) ձգողական ուժի  
ուղղությամբ հաշված՝ գտնվում են ուղղան-  
կյան տակ— $90^{\circ}$ ։ Այս դիրքում վիսրեցումը  
կատարվում է թույլ, յեթե հարկավոր ե ու-  
ժեղացնել վիսրեցումը, պետք է դիսկերը զը-  
նել վոքր անկյան տակ, այսինքն  $90^{\circ}$ -ից  
պակաս։ Ամենաուժեղ վիսրեցումը կատար-  
վում է  $720^{\circ}$ -ի տակ։ Բայց դրա հետ միասին  
ձգողական ուժն ավելի մեծանում է։ յեթե  
մի հետքով վիսրեցումը բավարար չե, պետք  
է կրկնակի փոցինել բայց նախկինին ուղ-  
ղահայաց ուղղությամբ։

#### XIV. Աերմի գՏՈՒՄԸ

Յանելու համար վորպես լավագույն սեր-  
մացու ոգտագործվում է սերմազաիչ մեքե-

Նայի միջոցով ստացված խոշոր ու ծանր  
հատիկը:

Նկատի ունենալով սերմագտման կարե-  
վոր նշանակությունը՝ բերքատվության բար-  
ձրացման տեսակից, պետք ե սերմացուն  
զտել և ցանել զտած սերմը. Խորհրդային  
Միության մեջ կան այնքան սերմագտիչ մե-  
քենաներ, վոր միանգամայն ապահովում  
են սերմերի լրիվ զտելը: Այդ կարեոր խըն-  
դրի վրա վոչ մի ջանք չպետք ե խնայել:

Սերմացուն պետք ե լինի առողջ, խոշոր  
և ծանր. բացի գրանից, նա իր մեջ չպետք  
ե պարունակի զանազան մոլախոտերի սեր-  
մեր, ջարդված հատիկներ և կողմնակի աղբ  
(քար, հող և այլն): Նախքան սերմագտիչ  
մեքենայով զտելը, սերմացուն պետք ե քամ-  
հարով մաքրել հողից, մոլախոտերի սերմե-  
րից, հարդից և ջարդված սերմերից, վորից  
հետո միայն զտել սերմագտիչով:

Սերմագտիչը հատիկները բաժանում է  
խոշոր և մանր տեսակների և առանձնաց-  
նում է սերմացուի մեջ յեղած անպետք

խառնուրդները: Նպատակահարմար ե սեր-  
մագտումը կատարել հացահատիկների հենց  
կալմելու ժամանակ և նախորոք պատրաս-  
տել պահանջվող սերմացուն:

## XV. Սերմի ծրունակությունը

Բացի սերմի զտելուց և ախտահանե-  
լուց, նախորոք պետք ե վորոշել նաև ծլու-  
նակությունը: Պետք ե սերմացուի զանա-  
զան մասերից վերցնել սերմը և ստուգել  
նրա ծլունակությունը: Դրա համար հարկա-  
վոր ե սենյակի տաքությունը լինի մոտա-  
վորապես 12°: Փորձը կատարել հետեւյալ  
ձևով՝ վերցնել ափսեներ, վորոնց մեջ ածել  
սովորական ջուր, սփսեն կիսով չափ ծած-  
կել տախտակով կամ ապակով, աղակին կամ  
տախտակը ծածկել ծողղական թղթող, այն-  
պես, վոր թղթի ծայրերը լինեն ջրի մեջ  
վորովեսպի ծծեն ջուրը և խոնավանան:

Առանց կրկնակի զտելու պետք ե թղթի  
վրա շարել 100-ական հատիկներ: Հատիկ-  
ները գտնվելով խոնալ թղթի վրա, իրենք

ևս խոնավանում են և փորոշ ժամանակից հետո ծլեր արձակում: Ծլածները ամեն որ պետք է վերցնել թղթի վրայից և նշանակել տետրում թե քանիերորդ որը քանիսը ծլեց:

Հավանական ե, վորքան ել յերկար թողնել հատիկները խոնավ թղթի վրա, այնուամենայնիվ այն հատիկները, վորոնք կորցրել են ծլունակությունը, նրանք չեն ծլի: Այդպիսով կվորոշվի թե յուրաքանչյուր 100 հատիկից քանիսը չծլեց:

Յենթադրենք 8 հատ չծլեց. դա նշանակում է սերմացուի 8<sup>0</sup>/<sub>0</sub>-ը կորցրել ե ծլունակությունը: Յեթե սերմացուի 8<sup>0</sup>/<sub>0</sub>-ի ծլունակությունը կորել ե, այդ գեպքում այն քանակին, վորը պետք է ցանկեր, պետք ե ավելացնել 8<sup>0</sup>/<sub>0</sub> ևս: Որինակ. յեթե գյուղատնտեսի ցուցմունքով պետք ե ցանել 100 կիլոգրամ, հետևապես աչքի առաջ պետք ե ունենալ ծլունակության կորուսար և ցանել 100+8 այսինքն 108 կիլոգրամ սերմ:

## XVI. Սերմի ախտահանումը

Հացահատիկների սերմերը հաճախ վարակվում են մրիկ կոչված մնկային հիվանդությամբ, վորի հետևանքով բերքատփությունն ընկնում ե:

Մրիկ հիվանդությունը մեծ չափով տարածված է լինում լեռնալին, խոնավ վայրերում, բայց հաճախ լինում ե նաև մնացած վայրերում, մանավանդ անձրևային, խոնավ տարիներում: Այդ հիվանդությունից ազատվելու համար, սերմացուն պետք ե ցանելուց առաջ ախտահանել, այսինքն սերմացուի հատիկների վրա գտնվող մրիկի սաղմերը մեռցնել:

Սերմացուի ախտահանման գործնական և մատչելի միջոցը համարվում է ֆորմալինով կամ պղնձարջասպով լվանալը:

Ախտահանելիս պետք ե վերցնել 300 մաս ջուր և մեկ մաս ֆորմալին, խառնել միմիանց հետ և լցնել կիսատակառի մեջ: Այնուհետև սերմացուն փոել բըեզենտի

կամ ուրիշ կարպետի վրա, ֆորմալինի հեղուկն սրսկել սերմացուի վրա ու թիակով խառնել այնքան, փոր սերմը թրջվի: Թրջվելուց հետո հավաքել սերմացուն, կույտ կազմել և ծածկել բրեգենտով, կամ տոպրակ-ներով:

Ախտահանած սերմացուն ծածկված դրությամբ պետք է թողնել յերկու ժամ, ապա սերմացուն դարձյալ փոել վորպեսզի չորանա:

20 ցենտներ սերմացու ախտահանելու համար բավական ե մեկ կիլո ֆորմալին:

Պղնձարջասպով ախտահանելու ժամանակ կիսատակառի մեջ լցնում են 7 դույլ ջուր ու մեջը լցնում 800 գրամ նախորոք մանրացրած պղնձարջասպ և լավ խառնում:

Սերմացուն պետք է լցնել տոպրակի մեջ և դնել լուծվածքի մեջ մինչև 5 րոպե, վորպեսզի բոլոր սերմացուն թրջվի, հետո փռել և չորացնել:

20 ցենտների համար կպահանջվի 4 կիլո պղնձարջասպ:

Վերոհիշյալ ախտահանման ձևերը կոչվում են թաց ախտահանում, գոյություն ունի նաև չոր ախտահանում, վորը վերջերս բավականին աջող կերպով գործադրվում է:

Չոր ախտահանման ժամանակ ոգտագործում են անջուր պղնձարջասպ, ածխաթթվուտային պղինձ, կամ փարիզյան կանաչ: Չոր ախտահանման ժամանակ դեղորայքի մեկն ու մեկի փոշին պետք է սերմացուի հետ միասին լավ խառնել հատուկ մեքենայի միջոցով:

Չոր ախտահանությունը համեմատաբար արագ է կատարվում հատուկ ախտահանիչ մեքենաներով, այդ պատճառով ել մեծ աղնատեսություններում ավելի ձեռնտու յե այս վերջի տեսակը: Բացի դրանից թաց ձևով ախտահանած սերմը պետք է խոկույն ցանել, մինչդեռ չոր ախտահանածը կարելի յե մի փորոշ ժամանակ պահել մինչև ցանելը:

Վերջերս ունենք նաև թաց ախտահանման հատուկ մեքենաներ, վորոնց միջոցով ավելի հեշտ ե ախտահանել քան ձեռքով:

## XVII. Յանի ժամանակը

Ընդհանրապես, վորպես կանոն, պետք է ընդունել, վոր ինչքան շուտ ե ցանված լինում աշնանացանի հացահատիկը, այնքան լավ ե դիմանում ձմռան ցրտերին։ Լեռնային շրջաններում ցանքի վաղ կատարելը տեսակաբոր ցանքերի համար խիստ կարեվոր ե, ինչպես որինակ. «ուկրայնական» և «կոպերատորական»։ Ամենալավ ժամանակը լեռնային շրջաններում պետք ե համարել սեպտեմբերի սկիզբը և մինչև սեպտեմբերի վերջը ավարտել ցանքը։

Նախալեռնային շրջաններում ավարտել մինչև հոկտեմբերի վերջը, իսկ դաշտավայրերում ավարտել մինչև նոյեմբերի 12-ը։

## XVIII. Գարնանացանի ժամանակը

1. Վորքան շրջանի գարունը ցամաքային ե, այնքան շուտ պետք ե սկսել ցանքսը։

2. Վորքան հողը խոնավ ե, որերը անձրևներով առատ և յեղանակը ցուրտ, այնքան կարելի յե ուշ սկսել ցանքը։

3. Կավային ցուրտ հողերում՝ ուշ սկսել։  
4. Ավագային հողերում շուտ սկսել։  
5. Սևահողերում շուտ կարելի յե սկսել. այն տեղերում, ուր գարունը կարճատէ ե, անձրևները սակավ, գարնան ցորեն ցանելիս ցանքսը պետք ե սկսել հենց վոր հնար ե լինում դաշտը դուրս գալու և աշխատանքները սկսելու։ Գարնան ցանքսը պետք ե կատարել այն ժամանակ, յերբ հողն ունի անհրաժեշտ տաքություն սերմի ծլման համար։ Որինակ՝ ցորենը 3—4<sup>0</sup>, գարին 3—4<sup>0</sup>։

## XIX. Ամփոփում

Ինչպես մեքենայացումը, այնպես ել ագրոնոմիական միջոցառումները հսկայական դեր ունեն բերքատվությունը բարձրացնելու, ինքնարժեքն իջեցնելու և աշխատանքը հեշտ և ժամանակին կատարելու գործում։

Ագրոնոմիական միջոցառումները և մեքենայացումը կյանքում կիրառելու համար հարկավոր են կոլլեկտիվ և խորհունտեսություններ, այդպիսի տնտեսությունները

Հնարավորություն ունեն զարգացնելու թե  
մեքենայացման և թե ազրոմինիմու-  
մի միջոցառումները։ Կոլտնտեսությանն և  
խորհունտեսությանն ե պատկանում ամբողջ  
փայլուն ապագան։ Նրանք պետք ե զարկ  
տան գյուղատնտեսության աշխատանքների  
լրիվ մեքենայացմանը և վորպես վառված  
փարոս՝ մթության և յետամնացության մեջ  
դանվող՝ կոլտնտեսությունից դուրս մնացած  
գյուղացիության այն փոքրիկ մասնիկն ևս  
ներգրավել կոլտնտեսություններում։


1934 թ. գետը 4-ին  
Թիֆլիս

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ցեր.

I.	Շարքացան մեքենան բարձրաց- նում ե բերքատվավությունը . . . . .	1
II.	Տրակտորային ափսեավոր շար- քացանի հակիրճ տեխնիկական նկարագրությունը . . . . .	6
III.	Ցանող ապագարատ . . . . .	8
IV.	Ցանող ապագարատի աշխատանքը	10
V.	Սերմնախողովակները և խոփերը	12
VI.	Ավտոմատը . . . . .	14
VII.	Ցանքսի կանոնավորումը . . . . .	15
VIII.	Շարքացանի դասավորումը աշ- խատանքի ժամանակ . . . . .	19
IX.	Մեքենայի խնամքը . . . . .	21
X.	Ազրոմինիմում . . . . .	22
XI.	Հողի մշակությունը . . . . .	23
XII.	Հողի լրացուցիչ մշակում . . . . .	26

XIII.	Յաքանը (փոցիը)	26
XIV.	Սերմի գտումը	29
XV.	Սերմի ծլունակությունը	31
XVI.	Սերմի ախտահանումը	33
XVII.	Յանքսի ժամանակը	36
XVIII.	Գարնանացանի ժամանակը	36
XIX.	Ամփոփում	37



## «Ազգային գրադարան»



NL0280346

ԳԻՒՆ Ե 1 Ր.

16394

982